## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի և «Խաչաբրյան-Շին» ՍՊԸ-ի միջև 2021 թվականի հունիսի 7-ին կնքված N ՀՊՏՀ-ՄԱ-ԾՁԲ-21/ՁԱՓ-2 ծածկագրով պայմանագրի շրջանակներում փոփոխություն կատարելու վերաբերյալ**

ք. Երևան «07» հուլիսի 2021թ.

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը, ի դեմս ռեկտոր Դ. Գալոյանի, որը գործում է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Խաչաբրյան-Շին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Ոսկանյանի, որը գործում է «Խաչատրյան-Շին» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, այսուհետ կողմեր, ղեկավարվելով Պատվիրատուի և Կատարողի միջև 2021 թվականի հունիսի 7-ին կնքված **N ՀՊՏՀ-ՄԱ-ԾՁԲ-21/ՁԱՓ-2** ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.8 կետի, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը:

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերի երկկողմանի համաձայնությամբ որոշեցին 2021 թվականի հունիսի 7-ին կնքված N **ՀՊՏՀ-ՄԱ-ԾՁԲ-21/ՁԱՓ-2** ծածկագրով պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման-վճարման ժամանակացույցով սահմանված՝ Ծառայությունների մատուցման ժամանակացույցը **(Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվարից 30 (երեսուն) օրացուցային օրվա ընթացքում)** 1-ին չափաբաժնի մասով փոփոխել համաձայն պայմանագրի 7,8 կետի:

1.2 1-ին չափաբաժնի մասով ծառայությունների մատուցման վերջնաժամկետ սահմանել 2021թվականի օգոստոսի 5-ը ներառյալ:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմին տրվում է սույն համաձայնագրի մեկական օրինակ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| «ՀՊՏՀ » ՊՈԱԿ | «Խաչատրյան-Շին» ՍՊԸ |
| ք. Երևան, Նալբանդյան 128 | ՀՀ, ք.Աշտարակ Համո Բեկնազարյան փ 2//1 |
| Գանձապետարանի հաշվարկային հաշիվ | «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ |
| 900018001876 | Հ/Հ 220043331598000 |
| ՀՎՀՀ՝ 01503224 | ՀՎՀՀ 05024303 |
| Ռեկտոր _____ Դ Գալոյան<br>(ստորագրություն) Կ.Տ | Տնօրեն _____ Գ. Ոսկանյան<br>(ստորագրություն) Կ.Տ |